



# ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հ Ր Ա Մ Ա Ն

№ 205/166-Ղ » 26 10 2023 թ.

## ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Երևանի պետական համալսարանի կանոնադրության 57-րդ կետի 9-րդ ենթակետը և ԵՊՀ գիտական խորհրդի աշխատակարգի 5-րդ կետի 2-րդ ենթակետը՝

հրամայում եմ՝

1. ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի գիտական խորհրդի կազմից հանել ֆակուլտետի նախկին դեկան, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, կ.գ.դ., պրոֆեսոր Էմիլ Գևորգյանին՝ թողնելով ընտրովի անդամի կարգավիճակով, գիտական խորհրդի կազմում հաստատել նորընտիր դեկան, կ.գ.դ., դոցենտ Կարեն Ղազարյանին որպես ֆակուլտետի ԳԽ նախագահ:
2. Ֆակուլտետի գիտական խորհրդի քարտուղարի պաշտոնում նշանակել ԳԽ ի պաշտոնե անդամ, Կենսաբանության ֆակուլտետի գրասենյակի ղեկավար-դեկանի տեղակալ, կ.գ.թ. Իրեն Շահագիզյանին:
3. Սույն հրամանի մասին տեղեկացնել ԵՊՀ գիտական քարտուղարին, կենսաբանության ֆակուլտետին ու խորհրդի անդամներին:
4. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

Հիմք՝ ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի դեկան Կ. Ղազարյանի 24.10.2023 թ. գեկուցագիրը:

ԵՊՀ ռեկտոր՝

Հ. Վ. Հովհաննիսյան